ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑՈՒՉԻՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Նոր դասի յուրացումը ժամանակակից մեթոդների միջոցով»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Հ. Բեյբության*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ալիտա Միսակյան

ԴՊՐՈՑ՝ Աստղաձորի միջնակարգ դպրոց

ՄԱՐՏՈՒՆԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

Նոր դասի յուրացումը ժամանակակից մեթոդների միջոցով. 5

ժամանակակից և ավանդական մեթոդների համեմատություն. 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. **20**

Հավելված. **21**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական հետազոտությունը գիտական գործունեության գործընթաց է և արդյունք, որն ուղղված է կրթության օրինաչափությունների, կառուցվածքի, բովանդակության, սկզբունքների ու տեխնոլոգիաների վերաբերյալ նոր գիտելիքների ստացմանը:

Մանկավարժական հետազոտությունը ստեղծագործական որոնումների տևական և աշխատատար գործընթաց է. այն ներառում է հետազոտական գործունեության մի շարք փոխկապված փուլեր, որոնցից յուրաքանչյուրը լուծում է յուրահատուկ խնդիրներ: Այդ փուլերի տրամաբանական հաջորդականությունից, կիրառված մեթոդներից ու միջոցներից է կախված հիմնավորված արդյունքների ստացումը:

Մանկավարժական հետազոտության առաջին և կարևոր փուլը մտահղացումն է. դա այն հիմնական գաղափարն է, որը միավորում է մեթոդիկայի կառուցվածքային բոլոր տարրերը, որոշում է հետազոտության, նրա անցկացման փուլերի իրականացման կարգն ու հաջորդականությունը, կազմակերպման ձևերն ու եղանակները: Հետազոտության մտահղացման ընթացքում տրամաբանական հաջորդականությամբ առաջադրվում են հետազոտության նպատակը, խնդիրները, վարկածը, տվյալ երևույթի գնահատման չափանիշները: Նշված բաղադրատարրերը համադրվում են որոշակի մեթոդների հետ, որոշվում են էմպիրիկ և տեսական մեթոդների կիրառման

հաջորդականությունը, գիտափորձի ընթացքն ու կառավարման առանձնահատկությունները: Հետազոտության մտահղացմամբ են որոշվում նրա կառուցվածքը, տրամաբանությունն ու իրականացման փուլերը: Հետազոտության մտահղացումը թելադրում է նրա իրականացման ռազմավարությունը, կանխատեսվող արդյունքների մոդելավորումը, իրականացման փուլերի բնույթն ու հաջորդականությունը: Հիմնախնդիրն իր բնորոշ առանձնահատկություններով արտացոլվում է հետազոտության թեմայում, որի արդիականությունը որոշվում է գիտության և պրակտիկայի համար նշանակալի արժեքով, հեռանկարայնությամբ:

Յուրաքանչյուր հետազոտություն ունի իր առանձնահատուկ ընթացքն ու տրամաբանությունը, որը բխում է հիմնախնդրի նպատակից, խնդիրներից, հետազոտվող թեմայի բնույթից, հետազոտողի վարպետությունից և մեթոդական պատրաստության մակարդակից:

Հետազոտվող աշխատանքի նպատակն է.

1. Ներկայացնել ժամանակակից մեթոդները
2. Ցույց տալ ժամանակակից մեթոդների կիրառման արդյունավետությունը դասապրոցեսին

Հետազոտական աշխատանքի խնդիրն է.

1. Ժամանակակից մեթոդների արդյունավետությունը նոր նյութի յուրացման ընթացքում
2. Ներկայացնել ժամանակակից մեթոդների տեսակները
3. Համեմատական վերլուծությունների միջոցով վեր հանել ավանդական և ժամանակակից մեթոդների թերությունները և առավելությունները:

Հետազոտվող աշխատանքի թեման բավականին **արդիական է՝** կապված նորարական տեխնոլոգիաների, ինչպես նաև բազմաթիվ նոր մեթոդների կիրառման բազմազանությամբ:

ՆՈՐ ԴԱՍԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը: Ուսուցման մեթոդները դրանք դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը: Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ: Դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերվում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը: Այս մեթոդները փոխկապված են և շատդեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ: Օրինակ դերային խաղը կամ թեզը և ուսուցման, և գնահատման մեթոդ է, աշխատանք գրքով և ուսումնառության, և դասավանդման մեթոդ է: Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

• լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,

• կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,

• լինեն բազմատեսակ,

• խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,

• համապատասխանեն ուսուցման նպատակներին,

• ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,

• ուսանողների և դասախոսների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ,

• համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

2 Գիտելիքների գնահատման մեթոդներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

• օբյեկտիվությունը,

• ստուգման անհատական բնույթը,

• համակողմանիությունը,

• ստուգման անցկացման ձևերի բազմազանությունը,

• տարբերակված մոտեցումը,

• համակարգայնությունը և կանոնավորությունը:

Գնահատումն ունի հետևյալ չափորոշիչները.

• նկարագրում են գնահատման առաջադրանքում ուսանողի կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը/աստիճանը:

• պահանջում եմ սահմանել և հրապարակել կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հնարավոր մակարդակները:

• կարող են ունենալ տարբեր տեսք, սովորաբար՝ նկարագրական ձևաչափ:

• պարունակում են համառոտ և հստակ տեղեկատվություն գնահատման տվյալ առաջադրանքում ուսանողի կատարողականի տարբեր մակարդակների վերաբերյալ, ինչը տարբեր գնահատողներին թույլ է տալիս իրականացնել հիմնավորված գնահատում: Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է սովորողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: Հաշվի առնելով այս չափանիշը ուսուցման մեթոդները դասակարգվում են՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ:[1]



[1] Տե՛ս հետևյալ հղմամբ
https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80

Ուսուցման պասիվ մեթոդներ: Սովորողների և ուսուցչի փոխգործունեության ձև է, որտեղ դասախոսը հանդես է գալիս որպես հիմնական գործող և ուսումնական գործընթացի կառավարող, իսկ ուսանողները հանդես են գալիս որպես պասիվ ունկնդիրներ: Դասախոսի կապը ուսանողների հետ իրականանում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի և այլ աշխատանքների միջոցով:

Ուսուցման ակտիվ մեթոդներ: Սովորողների և ուսուցչի համագործակցությունն է միմյանց հետ, երբ ուսանողները ուսուցման գործընթացում հանդես են գալիս որպես ակտիվ մասնակիցներ: Այս ուսուցման մեթոդներն ապահովում են ուսանողների արդյունավետ, ստեղծագործական գործունեությունը: **Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ:** Համագործակցություն է զրույցի երկխոսության շրջանակներում, ի տարբերություն ակտիվ մեթոդների, ինտերակտիվ մեթոդները նպաստում են սովորողների համագործակցությանը ոչ միայն դասախոսի, այլ նաև միմյանց հետ:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ

աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին:[2] Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Առաջարկում ենք դասապրոցեսը բաժանել 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝

1. **դասի սկիզբ,**

2. **նոր նյութի բացատրություն,**

3. **սովորածը պարզելու հնարներ**

Դասի սկիզբ: Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

Խորհրդավորություն: Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են որպե առաջ բացահայտել

[2] Տե՛ս Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Հերբերտ հիմնադրամ, Երևան 2020թ

գաղտնիքը:

Գուշակություն: Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող ենք առանձին թղթերի վրա գրել «կռիվ», «պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝ կոնֆլիկտը: **Զարմանք, անսպասելիություն**: Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

Մեջբերումներ: Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ): Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապալրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է

ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

ԳՈՒՍ



Հաջորդիվ աշ[illegible]է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմ[illegible]ում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վեր[illegible]մ է սովորեցի սյունակը:

Մտագրոհ:

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետկապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են

մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն[3]:

Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

Նոր նյութի բացատրություն: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Ըստ գիտական հետազոտությունների՝ երեխան մեկ դասի ընթացքում կարող միջինում սովորել 4-7 բան: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները

[3] Տե՛ս հետևյալ հղումը https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

նոր ներկայացված նյութը: Ապահով 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա: Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը 30 զուգակցվում են: Ստորև ներկայացված են գծապատկերների մի քանի օրինակներ: Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկին ուսումնասիրված նյութի հետ: Նոր նյութը բացատրելիս կարևոր է «սատանայի վկա» հնարի հաճախակի կիրառումը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում: Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում: Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է: «Սատանայի վկա» հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու լավ մեթոդ է: Կենտրոններով աշխատանք Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:

Կենտրոններ.

- **հետազոտողների կենտրոն**
- **ստեղծագործողների կենտրոն**

- **գրավոր աշխատանքի կենտրոն**
- **բացահայտողների կենտրոն**

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

Բացահայտողների կենտրոն: Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վերհանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին: Հետազոտողների կենտրոն Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ: Ստեղծագործողների կենտրոն Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն: Գրավոր աշխատանքի կենտրոն Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան: Ուսումնական նյութը մատչելի դարձնելուն շատ են օգնում դիդակտիկ պարագաները և նյութերը՝ այն ամենը, ինչը ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին: Երբ կենսաբանության դասն անցկացրեցինք ջրմուղում, ապա՝ ջրի մաքրման կայանում, որտեղ աշակերտներն իրենց հուզող հարցերի պատասխաններն ստացան նեղ մասնագետներից, լաբորատորիայում մասնակցեցին ջրի աղտոտվածությունը որոշող ռեակցիայի իրականացմանը, թեման ընկալեցին անհրաժեշտ չափով, և մանրուքները մոռանալուց հետո ընկալածը դարձավ գիտելիք:

Ֆրայերի մոդելը Սաշատարդյունավետգործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության

սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախանկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

ՖՐԱՅԵՐԻ ՄՈԴԵԼ



8. Հարցեր Հարցեր, որոնք հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման:

• Ինչո՞վ X-ն ու Y-ը իրարնման:

• Ո՞րն է նյութի հիմնական գաղափարը:

• Որո՞նք են X-ի ուժեղ և թույլ կողմերը:

• Ինչպե՞ս է X-ը կապված Y-ի հետ:

• Համեմատե՛ք X-ն ու Y-ը՝ ըստ Z չափանիշի:

• Որո՞նք են խնդրի լուծման տարբերակները:

• Ի՞նչը չեք հասկացել:

9. Մետիմացության թերթիկ Այս թերթիկը լրացնելիս կատարեք հետևյալ չորս քայլերը՝

1. Ընթերցե՛ք հարցերը: Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դրե՛ք «՞» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:

2. Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում:

3. Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրադրել եք «՞» նշանը:

4. Ստուգե՛ք՝ արդյոք ճիշտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել:

12. Ես-Դու-Մենք խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

13. Լուսակիր

Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին: Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտգտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը: [4]

ԼՈՒՍԱԿԻՐ

ԱՄԲՈՂՋՈՒԹ-ՅԱՄԲ ՅՈՒՐԱՑՐԵԼ Է ԹԵՄԱՆ	ՄԱՍՆԱԿԻ Է ՅՈՒՐԱՑՐԵԼ ԹԵՄԱՆ	ՉԻ ՅՈՒՐԱՑՐԵԼ ԹԵՄԱՆ

[4] Տե՛ս Ուսուցման պրոցես նավետհնարներ, Երևան, Ֆրիդրիխ Հերբերտ հիմնադրամ, Երևան 2020թ

14. Կիսատնախադասություն

Կիսատ	նախադասություն

- ✓ Ես այսօր սովորեցի...
- ✓ Ինձ զարմացրեց...
- ✓ Այսօրվա դասի ամենաօգտակար բանը...
- ✓ Ինձ հետաքրքրեց...
- ✓ Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ...
- ✓ Մի բան, որ չհասկացա...
- ✓ Մի բան, որ կուզենայի ավելի իմանալ...
- ✓ Այս դասից հետո ես զգում եմ...
- ✓ Ա դասից ավելի կսովորեի, եթե...

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզեան ավարտել: 15. «Խաթարված հերթականություն» Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը. պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատնախադասությունները,որոնք կուզեան ավարտել:

15. «Խաթարված հերթականություն» Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը. պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Շատ կարևոր է, որ ժամանակակից մեթոդները օգտագործելուց առաջ տեղայնացնել, փորձել պատկերացնել՝ արդյո՞ք այդ մեթոդը կօգնի ավելի և մատչելի դարձնել դասը:

Ժամանակակից մանկավարժության մեջ կարևոր է ճիշտ մեթոդի ընտրությունը և տեղայանացումը: Հնարավոր է նաև մեթոդը կիրառելու ժամանակ փոխել որոշակի տարրեր, երբ կիառելու ժամանակ ի հայտ են եկել դժվարություններ: Բնականաբար ներկա ժամանակշրջանում պետք առաջնորդվել ժամանակակից մեթոդներով, որը կհանդիսանա դրդապատճառ սովորողների կողմից դասին առավել լավ պատրաստվելու և կարողունակությունը զարգացնելու համար: Կան ժամանակակից բազմաթիվ մեթոդներ առանց որոնց դժվար է պատկերացնել բուն դասապրոցեսը: Սակայն այս ամենի հետ միասին չպետք է անտեսել ավանդական մեթոդների կիրառությունը, որոնք ժամանակակից մեթոդների հետ

համադրելով կապահովվի դասապրոցեսի արդյունավետությունը: Ցանկացած մեթոդ ունի իր առավելությունները և թերությունները: Օրինակ՝ դիտումը հանդիսանալով ավանդական մեթոդ, ունի առվելություններ և թերություններ: Առավելությունն այն է, որ փաստերը վերցվում են իրականությունից, և առկա է դիտման առարկայի՝ ամբողջականության, համակողմանի կապերի ու դրսևորումների մեջ ուսումնասիրման հնարավորություն: Սակայն դիտումը հնարավորություն չի տալիս ակտիվորեն ներգրավվելու ուսումնասիրվող գործընթացում, փոխելու այն կամ կանխամտածված ստեղծելու որոշակի իրավիճակ: Հետևաբար դիտման արդյունքները պետք է ամրագրվեն այն տվյալներով, որոնք ստացվում են մանկավարժական հետազոտության այլ մեթոդների միջոցով: ***Մեթոդները մեզ օգնում են վեր հանել միջառարկայական կապերը***, օրինակ՝ Ռուսաստանի մայրաքաղաքները թեմայում մի շարք մեթոդներ են կիրառվել՝, հոգեվիճակի քարտեզ, հերոսների, կերպարների վերլուծություն,գծագիր, տեքստի քարտեզը: Կարևոր է ճիշտ նպատակներ և վերջնարդյունքներ ամրագրել օրվադասի պլանի մեջ: Դասի նպատակն է՝

- Մեկնաբանի տեքստի հիմնական գաղափարը
- Ընդգծի տեքստի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերը
- Ցույց տադեպքերի հաջորդական ընթացքը
- Տարբերակի հողինակին և պատմողին
- Գտնի տեքստում խորհրդանիշները և մեկնաբանի
- Ներկայացնի տեքստում հանդիպող տեղանքին, կենդանիներին,բույսերի մասին տեղեկություններ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Շատ կարևոր է, որ ժամանակակից մեթոդները օգտագործելուց առաջ տեղայնացնել, փորձել պատկերացնել՝ արդյո՞ք այդ մեթոդը կօգնի ավելի և մատչելի

դարձնել դասը: Ժամանակակից մանկավարժության մեջ կարևոր է ճիշտ մեթոդի ընտրությունը և տեղայանացումը: Ցանկացած մեթոդ ունի իր առավելությունները և թերությունները: Օրինակ՝ դիտումը հանդիսանալով ավանդական մեթոդ,ունի առվելություններ և թերություններ: Առավելությունն այն է, որ փաստերը վերցվում են իրականությունից, և առկա է դիտման առարկայի՝ ամբողջականության,համակողմանի կապերի ու դրսևորումների մեջ ուսումնասիրման հնարավորություն: Սակայն դիտումը հնարավորություն չի տալիս ակտիվորեն ներգրավվելու ուսումնասիրվող գործընթացում, փոխելու այն կամ կանխամտածված ստեղծելու որոշակի իրավիճակ: Հետևաբար դիտման արդյունքները պետք է ամրագրվեն այն տվյալներով, որոնք ստացվում են մանկավարժական հետազոտության այլ մեթոդների միջոցով: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ,ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Նոր դասի յուրացումը ժամանակից մեթոդների օգնությամբ ավելի հետաքրքիր և արդյունավետ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Հերբերտ հիմնադրամ, Երևան 2020թ

2. https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80
3. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf